

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԱՐԵ. ՏԵՐ-ՀԱՎԱՍՆԵՑԱՆ

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
НОСТОРОЖЕДЕНИЯ  
АКАДЕМИИ НАУК  
СССР

ԲՐԻԳԱԴԻ  
ՎԱԶԻԿԸ

891.99  
S-44

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏԱԿԱՆ

1932

ՏԵՐԵՎԱՆ

- 6 NOV 2011

СА Λ  
524

891.59

ԱՐԵ. ՏԵՐ-ՀԱՎԱԽԱՅԱՆ

ԿԱՐԱ

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ВОСТОКОВЕДЕНИЯ  
АКАДЕМИИ НАУК  
СССР

# ԲՐԻԳԱԴԻՐ ՎԱԶԻԿԸ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱԿԱՂՈՒԹՅՈՒՆ

ԳԵՂԱՐՔՈՒՍՏ

1932

ՑԱՐՑԱՐ

20.08.2019

58401

1

Վաշիկը տանը մենտկ եր մնացել։  
Հալըն ու մալը դնացել ելին կոլխոզի ակտիվի ժողովին։

Ժողովի գնալուց առաջ հալը պատվիրեց Վաշիկին  
տանը մնա և լեթե իրենք ուշանան, ժամանակին կովին  
ջուր տա և առաջը խոտ գցի։

Վաշիկի ինը տարին արդեն լրացել եր. նա լերկը ըդ  
խմբի աշակերտ եր և պիոներ. Գուրզում ինը տարեկան  
լերեխան նորը ոգնող աշխատավոր ձեռք ե. պնտեսության  
մեջ շատ գործեր նրա վրա լին ընկնում։

Մութն ընկել եր. Վաշիկը կովին ջուր եր տվել, նրա  
բաժին խուրձ խոտը փռել եր առաջը, տակը մտքրել-վեր-  
ջացը եր ու գոմի գռան փակը զցել, բայց ծնողները  
դեռ չելին վերադարձեր։

Վաշիկը գործը վերջացնելուց հետո մեկ մտածեց  
գնալ կոլխոզի կորմիր անկլուն, ուր ժողովն եր, բայց  
վորովհետև ստատիկ ձյուն եր գալիս, մտադրությունը փո-  
խեց. Վորոշեց նստել և լեղանտկացուց կտղմել. Ուսուց-  
չուհին պատվիրել եր լեղանակամցուց պատրանտել և ա-  
սունետև ամեն որ նշանակել որվա լեղանակը՝ ձյուն և լիկել,  
ստոնամանիք ե լեղել, արև ե ծտղել, թե՛ թուխալ ե իջել:  
Այն մի լեղանակի համար ամբողջ խմբով մի-մի պալմանա-  
կան նշան ելին վորոշել Արինակ, յերբ ձրուն ե դալիս, արդ  
որվա քառակուսու մի մասում նշանակելու լին ստորակե-  
տի նման փոքրիկ գծիկներ, վերևից ներքե, արսինքն ախ-

Պատրաստ ապարան  
Գյալիս 7573 (բ)  
Հրան. № 2295  
Պատվեր 2310  
Տիրաժ 4000



60251-67

Մրգագրիչ Հովհ. Հակոբյան

Հանձնված ե արտադրության 7/VII 1932 թ.

Ասուագրված ե ապագրելու 20/X 1932 թ.

պես, ինչպես ընկնում են ձրտն սպիտակ փափուկ փաթիները իսկ բեր արև ե լինում, դժում են մի փոքրիկ կլոր արջանակի, չորս կողմը ճառագալթների նման զծիկներ, այսպես, ինչպես իբրև դառաղբրգում արեգակն ենկարած: Յեվ այդպես ել մուռա լեղանահների համար՝ զանողան ուրիշ նշաններ:

— Յեղմնակացուցընրա համար ե, — բացատրեց ուսուցչունին, — վորպեսզի կարողանաք իմանաք ամիսների միջին յեղանակը և դրա համապատասխան մարդիկ գասավորեն իբրև աշխատանքները, վոր սխալ գործ չբռնեն, այնպիսի գործ, վորը յեղանակի պատճառով հնարավոր չի լինի վերջացնել, կամ իմունալով, ասենք, վոր յեղանակը կտրող ե խանգարել, շտապեն կատարել-վերջացնել:

— Այդ հո մեզ համար շատ լավ կլինի, — ուրախացան լերեխաները: — Նշանակում ե յեղանակացուցը կոգնի մեզ բամբակը ժամանակին հավաքել: Յեվ իբրև ձյունը զա, դաշտում ալիս բամբակ մնացած չի լինի:

Վաչիկն իր մաքում դրել եր ինամքով ու մաքուր յեղանակացուց կազմել, վորպեսզի ամիսը լրանալուց հետո խփի պատին և մյուս տարի համեմատություն անի:

Սենլակում արդեն մութն եր:

Վաչիկը բարձրացավ տաքուրետի վրա, իջեցրեց պատից կախված լամպը, դրեց սեղանին, ակնատից վերցրեց լուցին, վառեց: Հետո զցեց դռան փակն ու նստեց սեղանի մոտ աշխատանքի:

Նկարչության տեսրակից հանեց մի թերթ հոստ թուղթ, չափեց ամեն կողմից, վորպեսզի չսխալվի, ապա սկսեց ամսվա որերի հաշվավ քառակուսիներ զծել:

Նա շատ զգուշ եր աշխատում, վոր մաքուր լինի գծած աղյուսակը:

Վաչիկն այսպես եր տարվել իր աշխատանքով, վոր չզգաց ձնողների վերադառնալը:

Դուռը բաց անելուց հետո, Վաչիկը վազ ավեց սեղանի մոտ, վերցրեց իր մաքուր, հավասար տողերով գծած աղյուսակն ու մոտեցավ հորը:

— Հայրիկ, տես լավ ե:

Բայց հալրն տիս անգամ սովորականի նման չժպատաց նրան, ձեռքը չղբեց Վաչիկի զլիխն ու չքաշեց նրան իր թեկի տակ:

Վաչիկը զարմացավ ու մի րոպե կանգնած տեղում անշարժացավ: Աշխատանքի ընթացքում նրան անչափ ու բարխություն եր պատճառում այն միտքը, վոր հալրը գովելու յեւ իբրև աղյուս սիրուն ու մաքուր աղյուսակ կազմելու համար:

Նրա ուրախությունը չքացավ: Հայրն անգամ չնայեց թերթին և նույնիսկ, կարծես, մի տեսակ ղժգոհնեց:

Վաչիկը շատ եր սիրում իր հայրիկին: Նրա ամեն մի գովաստնական խոսքն իր համար թանգ եր համարում, առվելի, քան լեթե իբրև շատ համեղ համեղ մրգեր տալին:

Զարմանքով նայեց նոր դեմքին:

Հալրը ախուր եր: Ճակատին կնճիռներ ելին հավաքվել:

Ի՞նչ ե պատահել, չլինի թե ինքն ե պատճառը: Նա չեր հիշում, վոր ինքն այդ որ հորը կամ մորը վշտացրած լինի: Յեվ ընդհանրաւակն նա չեր վշտացնում նրանց: Դուցե ուսուցչունին ե գանգատվել: նու լել ժողովում ե յեղել անշուշտ:

«Զե՞, ուսուցչունին ինչն պիտի գանգատվի իրենից, — մտածում ե Վաչիկը, — քանի վոր ինքը դաստիառում անկարգություն չի անում, գասերը միշտ սովորած ե դպրոց գնում, առաջադրությունները կատարում ե: ինքն ել դաստիառում վնշիկավար ե և իր վնշիկից ուսուցչունին զոհ ե: Նույնիսկ անցյալ որը վորպես որինակ, իր վնշիկին ցուց ավեց ու զովեց:»

Մտածում ե Վաչիկն ու չի կարողանում հասկանալ, թե հայրիկն ինչու յեւ իբրև դժգոհ:

Վաշիկն ուզում ե հարցնել, բայց այդ ժամանակ մտյան  
ընթրիքի սեղանը պատրաստել վերջացնելով, կանչում ե  
նրանց:

— Նստեք, կերակուրը կսառչի:

Եեվ լեռը հայրը մոտեցավ սեղանին, մտյան ավելացրեց.

— Ե, ես քեզ վոր են զլխից տսում ելի թե կոլխո-  
ղում եղան բաներ կպատահեն, դու ինձ չելիք լում:



Վաշիկը լարեւմ ե ուշադրությունը: Նշանակում ե հոր  
տիրության պատճառն ինքը չի: Ուրեմն կոլխողումն ե մի  
վառ բան պատահել:

Վաշիկն հիշում ե, ինչպես անցյալ տորի մալրը բա-  
վական ժամանակ հակառակում եր հորը, չեր ուզում, վոր  
իրենք կոլխող մտնեն:

— Մենք չքափօր ենք, ճիշտ ե, — կը ինում եր մալ-  
րը, — բայց դե ելի եսպես մի կերպ դլուխ ենք հանում,

մեր աչքը մեր դուանն ե: Իսկ կոլխողում ով իմանա ինչ  
անհամածայնություններ լինեն, ժամանակին գործ չանեն:

Բայց վերջը համոզվեց և այժմ հոր հետ միասին կոլ-  
խողի տկտիվ աշխատող եւ իսկ հիմի բնչ ե պատահել,  
վոր ալդպես դժգոհ ե խոսում:

Արդեն մի տարի լե, նրանք կոլխողում են և այս տա-  
րի անհամեմատ ավելի լավ են ապրում, քան առաջ Միշտ  
ել հաց ունեն, հագուստ ու կոշիկ են ստանում. Այս ատ-  
րինունիսկինքը կը կնակոշիկ ունի, իսկ հերու, լեր դեռ ա-  
ռաջին խմբում եր, արեխներով եր դպրոց գնում և վու-  
գերը թրջում ելին ու մրում: Մալրիկն ել հրեն մի ձեռք  
նոր, կարմիր վարդերով հագուստ ունի, հալիքիկն ել պի-  
ջակ տվեցին, բայց նա ինքը չվերցրեց: Ասեց, վոր ավելի  
կարիքավորներ կան, թող նրանց աան, իսկ ինքն այս տա-  
րի դեռ հագուստ ունի քչից-շատից:

Մալրիկի խոսքերից հայրն ասես սթափվեց, դեմքը  
պարզվեց:

— Ի՞նչ կա վոր, ալ կնիկ, — ասաց նա, սեղանի մոտ  
նոտելով, — կոլեկտիվ աշխատանք ելավն ել կլինի, վատն եք

— Ի՞նչ ե պատահել, հալրիկ, — այս չկարողացավ  
դսպել իրեն վաշիկը:

Հայրն ասես չլսեց վորդու հարցն ու շարունակեց իր  
խոսքը:

— Նոր կլանք ե, նոր գործ ե, ամեն ինչ միանդամից հո-  
լավ չի լինի: Պակասավոր կողմեր ել կլինեն: Հարկավոր ե  
թերությունները վերացնել, զգուշ լինել, վոր սխաններ  
չլինեն:

— Ի՞նչ եմ ասում, իես հակառակ չեմ, — ավելի ինքն իր  
համար ասաց մալրը, ամանները լցնելով: — Յես են եմ ա-  
սում, վոր ժամանակին չեն մտածել և հիմի եսաեսակ  
դժվար գրություն ե առաջացել:

— Ի՞նչ ե պատահել, — կը կին հարց ավեց Վաշիկը:

Հալրը կարծես նոր միտք նկատեց նրան, ժպտաց ու  
մոտ կանչեց:

— Արի, արի նստիր, բան չի պատահեր

Վաշիկը մոտեցավ սեղանին ու նստեց տաքուրետի  
փրտ: Նա չեր սիրում թմբտի միրա նստեր

— Բան չի պատահել, վորդիս, — շարունակեց խոսքը  
հալրը: Մի թեթև դժվարություն ե պատահել, բայց դե  
տակից դուրս կգանք: Շատ ավելի մեծ դժվարություններ  
ենք հաղթել, ես ել կհաղթենք:

— Եգուց-մյուս որը ձլունք կհաջի, — մտահողված  
արտասանեց մալրը: Գարուն ե բացվում:

— Դե ասեք ե, — սրտնեղած ասեց Վաշիկը: Բայս  
կոլխոզական չեմ, — ավելացրեց նա վշտացած:

Հալրը ծիծաղեց, նշանակալից նայելով մորը, վորը  
նույնպես ժպտում եր վորդու տսածի վրա:

— Ուրեմն դու լե՞լ կոլխոզական ես, համ, — կատակեց  
հալրը:

— Քարեկե, յես հո կուլտկի տղա չեմ, — հպտրտ ա-  
սաց Վաշիկը:

Հոր ծիծաղկոտ հայացքը գորովալից արտահայտու-  
թիուն ստացավ:

— Ապրես, վորդիս, — ասաց նա խրախուսական շեշ-  
տով: — Դե վոր կոլխոզական ես, իմացիր, վոր մեր բանը  
մի քիչ ձախացել ե: Մեքենա-տրակտորուին կալանի բաց  
արած արհեստանոցում լերկաթը վրջացել ե: Ճանա-  
պարհներն ել հրեն կապվել են, ձլուն ու բուք ե անում,  
քտղաք գնալու հնարավորություն չկա: Իսկ դործիքների  
մեծ մասը չի վերանորոգված: Մինչեւ ճանապարհները բաց-  
վեն, մինչեւ լերկաթ ստացվի, գտրուն ել կզա: Գործը  
կուշանտ:

— Դե աստ ժամանակին վարը չի լինի ելի, հայրիկ,  
— հարցըց Վաշիկը մի տեսակ վախեցած:

— Մենք ել հենց տիդ ենք միտք անո յ, վորդէ, —  
պատասխանեց հալրը, շարունակելով ուտել:

Տիրեց լոռություն:

Բոլորը մտահողված ելին:

Վաշիկը նույնչափ մտահողված եր, ինչպես իր ծնող-  
ները:

Լոռության մեջ նրանք վերջացրին իրենց ընթրիքը:

Յերբ մալրը սեղանն հավաքեց, հալրը ծիախւա վա-  
թաթելով, դաշտավ վորդուն:

— Բեր տեսնեմ ինչ ես գրել:

Սակայն Վաշիկի միտքն ուրիշ բանով եր զբաղված:  
Նրա ուղեղը լարված աշխատում եր:

— Ուրեմն բամբակը ժամանակին, չենք կարող ցանել:

— Եղաղես ե դուրս գալիս, վորդիս Պլանը քանդ-  
վում ե:

— Բաս կենին պապի կտակը չենք կտարելու ելի,  
— բուռն ասաց Վաշիկը, առաջ ընկնելով ու թերը փոե-  
լով սեղանի վրա:

Հալրը վոչինչ չպատասխանեց: Վորդու խոսքերից նրա  
դեմքը, վոր արդեն ազատվել եր տիրության կնճիռներից,  
նորից արտօմեց: Նա կախ գցեց գլուխն ու խորը ծծելով  
ծխախոտը, ծխի խիտ քուլաներ բաց թողեց բեղերի տա-  
կից:

2

Արդ գիշեր լերկաթ ժամանակ Վաշիկի քունը չեր տա-  
նում: Մութ սենյակում անկողնի մեջ նա մեկ փակում եր  
աչքերը, մեկ բաց եր անում և շատ տեսակ-տեսակ մտքեր  
եր անում ախ ստախն, վոր կոլխոզը կենին պապի կտակը  
չի կտարելու, վոր կոլխոզի գործերը կարող են անհա-  
ջող գնալ:

«Համա ինչ կուրախանա Սարոն, — մտածում ե նա  
իր դասրնկերոջ մասին: — Նրա հորը կուլտկաթափ են արել,  
նա կոլխոզին հակառակ ե»:

«ԶԵ, եղ ինչպես կլինի, — շարունակում ե միտք անել նու, — Հալրիկը, Միջայել ապերը, Մրապը, բոլորը չեն թողնի կոլխոզի բանը վաս գնա»:

Ու հանդստանում ե նա այդ լեզրակացութիւնից, բայց կրկին նրա ուղեղում անհանդիստ մի միտք ե ծառամ:

«Բա լերկաթ վճրտեղից»...

Վաչիկը չեր հիշում թե լերը եր քոնը տարել, բայց առավոտան արթնացավ իր ժամանակին:

Հաղնվեց, լվացվեց, մի բաժակ կաթ խմեց մի կտոր հացի հետ, մի կտոր, հաց ել հետն առնելով, վերցրեց գրքերը լերեկոլմն զծած լեղանակացւցի հետ ու դուրս լեկավ տանից դպրոց գնալու:

Գյուղի հրապարակում հանդիպելով ընկերներին, միասին ճանապարհ ընկան դեպի դպրոց:

Դպրոցը դյուղից գուրս եր գտնվում:

Առօջ դյուղում լեղել եր մի սենյակից բաղկացած դպրոց և արդ մի սենյակում միտսին նստում ելին լերեք բաժանմունքի, տախինքն լերեք խմբի աշակերտները և մեկ ուսուցիչ միտքամանուկ պարտպում եր բոլորի հետ: Դպրոցի շենքն ել մի հին, ցածր առաստաղով, հողե հատակով, մեջ տեղը սլուներ խփած սենյակ եր:

Իսկ ալժմ հինգ տարի լե արդեն, վոր կարմիր քարից մի մեծ շենք ե կտուցված, ուր և տեղափորված և միմիանցից շատ մոտ տարածության վրա զտնվող լերեք դլուղերի հումար 7. ամյա դպրոցն, տանձին առանձին դաստիաներով, ուսուցիչների մեծ խմբով:

Դպրոցն ունի կարմիր անկուն, ներկայացումների դահլիճ, ֆիզկուլտի համար տուժնձին սենյակ:

Յեվ վրակեսզի լերեք գլուղերի աշակերտների համար ել հեռու չլինի, դբա համար ել դպրոցը շինված ե ուղիղ դլուղերի մեջ տեղ ընկած բաց դաշտում և լերեք գլուղերից ել հատուկ ճանապարհ ե բացվոծ:

Գնում ե Վաչիկն ընկերների հետ նոր լիկած ձրւնը արորելով ու մտքից դուրս չի գտլիս հոր իրիկվա ասածները:

«Վորտեղից լերկաթ գտնելու...»

3

Մեծ դասամիջոցին լերեխաները՝ տղաւ և աղջիկ՝ լերկու խմբի բաժանմեցին, ձնտղնդի խաղալու:

Թիշերված լիկած փափուկ ձրւնը շատ եր զբավում նրանց:

Վաչիկը խաղից հրաժարվեց:

Նա բարձրացավ լերկութիւն հարկը, ուր Փիղկուլտի սրահն եր:

Ուզում եր տեսնել իրենց խմբի պիոներական կոլվարին կոլվարը կարձր խմբի աշակերտ եր և սաստիկ սիրում եր ֆիզկուլտուրալով զբաղվել: Նա հենց վոր աղատ ժամանակ եր գտնում, իսկուն վազ եր տալիս ֆիզկուլտի սրահ:

Յերբ Վաչիկը ներս մտավ, կոլվարը վիչացնելով, փորձում եր ծանրություն բարձրացնել:

Նկատելով Վաչիկին, նա հպարտությամբ դարձավ նրան:

— Մի տես, ինչպես եմ բարձրացնում:

— Լավ, եղ հետո, ուրիշ գործ կա, — ասաց Վաչիկը լուրջ տոնով:


— Ի՞նչ, բան ե պատահել, — իսկուն ուղղվեց կոլվարը, քայլ անելով դեպի նու:

— Պատահել ե, հապա չի պատահել, — պատասխանեց Վաչիկը, հազիվ խույս տալով թափով վազող մեկ առ Փիղկուլտուրնիկի հետ ընդհարվելուց:

Վաչիկն ու կոլվարը քաշվեցին որաճի մի հեռավոր անկուն, լուսամուտի մոտ:

— Ասա, — սպասողական ասաց կոլվարը:

Վաչիկն հուշվելով ու շփոթվելով, պատմեց վերանորոգչական արհեստանոցում առաջացած ժամանակավոր զժվարություն մտովն:



Կոլվարն ինքը կոլխողականի տղա լեր, նա անմիջապես ըմբոնեց տին վատար, վոր կարող ե առաջանալ դրանից:

— Եղ լավ չե, — մտահոգվեց կոլվարը, ծոր տալով բառերը:

— Լավ չե, — շեշտեց. Վաչիկը:

— Պետք ե լերկաթ գտնել, բայց վճրաեղից, — ասես իրեն ասաց կոլվարը:

— Հավաքենք... տներից, — վրա ըերեց Վաչիկը, արտահատելով իր մտածած միջոցը, սպասողական դառնաւվ դեպի կոլվարը, թե ինչ կասինա իր վորոշումի մասին:

— Կարելի լե, — վոգեորվեց կոլվարը: — Դա շատ լավ միտք ե: Պիսներական ընդհանուր ժողով տնենք:

— Զե, մինչև դես, մինչև դեն, ուշ կլինի, — հոկառակեց Վաչիկը: — Դարբնոցը կանգ ե առել:

— Ճիշտ է, մեկ օրն ել նշանակություն ունի: Պանը չի կատարվի:

— Ինարկե, — հաստատեց Վաչիկը: — Մենք սկսենք, իսկ հետո ընդհանուր ժողով կանենք:

— Ինչպես, — մի փոքր ատարակուսեց կոլվարը: — Ո՞վ սկսի:

— Մեր խումբը: Բրիգադ կազմենք, հենց եսոր ել սկսենք հավաքել:

— Լավ! Դասերից հետո: Ալսոր քանի՞ դաս ունեք:

— Չորտ:

— Հենց վոր արձակվելու զանդը խփեն, գալիս եմ:

#### 4

Վերջին դասն եր, Վաչիկի գեմքն ալլս մտազբաղ չեր, բայց նա ախուամենանիվ անուշտպիր եր դեպի դամն ու անհամբերություն եր արտահայտում: Նունիսկ ուսուցչունուց նկատողություն ստացավ: Ռւբիշ ժամանակ նա անպայման կտիսբեր, կամտչեր նկատողության համար, վորովհետև դասարանում համարվում եր որինակելի աշակերտներից մեկը, բայց այսոր անզամ չզգաց ել, կարծես նկատողությունն ամենեին իրեն չեր վերաբերում: Նրա միտքն ուրիշ բանով եր զբաղված:

Դան արձակիելու զանդը խփեցին:

Ուսուցչունին կուրս գնաց՝ դասարանից:


Ցերկիանելին սկսեցին հավաքել իրենց դրերն ու դասարանական պիտուլքները:

Վաչիկն սննամբեր նախում եր դուանը. կոլվարն ուշանում եր:

Աշակերտներն արդեն գրքերն ու պայուսակներն առած, ուզում ելին գուրս գնալ դաստրանից:

Վաշիկն արտգ դուրս թռավ իր տեղից ու վազեց  
Նստարաների տոտջ:

Հենց այդ բոպելին ներս լեկավ կոլվարը, դեռ շեմ-  
փից ձախ տալով.



— Պիոներներ, սկսարած:  
— Միշտ պատրաստ, — պատասխանեցին պիոներները,  
ձեռքերը վեր բարձրացնելով:  
— Ընկերներ, ժողով ե, — հայտարարեց կոլվարը, կանգ  
տունելով նրանց առաջ:

Պիոներները վայր գրեցին իվենց գրքերն ու պատ-  
սակները, կրկին նստելով իրենց տեղերում:

Մի փոքրիկ խումբ մատց անորոշ նրանք պիոներ  
չելին:

— Մենք ել մնանք, — դիմեց նրանցից մեկը կոլվարին:  
— Ընկերներ, ինչ կասեք, — դիմեց կոլվարը պիոներ-  
ներին:  
— Թող մնան, — համաձայռություն հայտնեցին նրանք:  
— Սկսենք, ասաց կոլվարը, իբր բոլորը տեղափոր-  
վել ելին:

— Ինչի մտսին, — հարց տվեցին այս ու այն  
կողմից:

— Վաշիկը բան ունի ասելու վաշիկ, առաջ լեկ, —  
կանչեց նրան կողմարը:

Վաշիկը, վոր կոլվարի ներս դալու ժամանակ կանգ  
եր առել նստարաների տրանքում, շփոթված տռաջ անցավ:

— Ի՞նչ, ի՞նչ, — դարձան նրա կողմը բոլորը:

Վաշիկը սրտապնդվեց:

— Կոլխոզի մասին, ասաց նա:

— Կոլխոզի մասին ի՞նչ — հարցրեց դեռ նստարան-  
ների տրանքում կանգնած Արամը, վոր պալուսակն եր  
տրձակում մեջքից:

— Կոլխոզը մեր ի՞նչ բանն ե... Տղերք, գնանք, — ա-  
սաց պիոներներից մի կողմ, փոքրիկ խմբակի հեա նստած  
Վահանը:

Նա վճռական գուրս լեկավ տեղից և ուղղվեց դեպի  
գուռը վատահ, վոր մբումները հետեւելու լեն իրեն:

Ստկան նրան հետեւող չգտնվեց:

— Քնա, գնա, — ձախ տվեց Սիրանը: — Կուլակի բա-  
րեկամ հորդ մոտ դնա:

Վահանը կանգնել եր զոան մոտ անորոշ: Վոչ վոք  
տեղից չեր շարժվում:

— Բա լես մենակ վժնց գնամ, — կմկմաց նա: — Ախը  
մենակ վախենալու յա:

— Բաս հենց բանն ել եղ ա լե, կարամ մենակ գնալ,  
ձախ տվեցին տղաներն ալս ու այն կողմից:

— Հարկածոր ա, վոր բոլորովս միասին գնանք:

— Դե գնա լե, ի՞նչ ես կանգներ: Խանգամը ես  
ձեզ, — կրկին դարձավ Վահանին Սիրանը:

— Ապասեցեք, ընկերներ, — ասաց կոլվարը: — Սիրանը  
սխալ ե: Արդպես չի կարելի:

— Ճիշտ ե, — տեղից վեր թռավ Արամը, վոր արդեն  
պալուսակն աւսից հանել եր ու տեղն անցել — Եղ դուրս ե

գալիս, վոր դու Վահանին կուլտակի մոտ ես ուղարկում,  
Սիրան. Վահանը մեր ընկերն ե, նա մեզ հետ պիտի լի-  
նի. Ուղիղ չեմ տառամ, ընկերներ, — դարձավ Արամը մրու-  
ներին:

— Ուղիղ ե, ուղիղ ե, — լսվեցին զանտզան կողմերից:

— Ճիշտ ե, ընկերներ, — խոսեց կոլվարը, վոր հե-  
տևում եր, թե ինչ վերաբերմունք են ցուց տալիս պիո-  
ներները Արամի տածին: — Վահանը կուլտակ չի և վոչ ել  
Վահանի հալըն ե կուլտակ: Նա միայն կուլտակի ազդեցու-  
թան տակ ե ընկել և հենց ալդ ե պատճառը, վոր Վա-  
հանը մինչև այժմ պիոներ չի դարձել:

— Հայրը չի թողնում, — տսաց մեկը,

— Ծեծում ե, — լրացրեց մեկ ուրիշը,

— Վորովհետև նրա հայրը խարվել ե կուլտակից,  
շարունակեց իր խոսքը կոլվարը — Վահանին հարկավոր ե  
ազատել հոր ազդեցությունից:

— Հորն ել, հորն ել ազատել, — տսաց Տրդատը:

— Այո, հորն ել իսկ դրա համար պետք ե վոր Վա-  
հանը ձեզ հետ լինի, ձեր մեջ: — Կոլվարը ձեռքը բարձ-  
րացրեց դադարեցնելու բացականչությունները, վոր պատ-  
րաստվում ելին թռչելու ամեն կողմից:


— Պիոներները միշտ պատրաստ են որինակ ցուց  
տալու, — տսաց Արշավիրը, վատքի ցատկելով:

— Միշտ պատրաստ, — միաբերան տսացին պիոներ-  
ները և նրանց հետ միասին ինքնաբերաբար բացական-  
չեցին նաև հեռվում նստածները:

— Ալդպես, ընկերներ, — տսաց կոլվարը: — Այդ մա-  
սին մենք մեկ ուրիշ անգամ ելի կխոսենք: Իսկ այժմ թող  
վաչիկն ասի, ինչ վոր կամենում եր հալանել մեզ: Վաչիկ,  
առաջ անցիր:

Վաչիկն անցավ նստարանների տռաջ, կոլվարի մոտ:

— Ընկերներ, յես են ելի տառամ, վոր կոլվարի գոր-  
ծերը դժվարացել են...



Յերեխանները դարձան նրա կողմը, հետաքրքրությամբ  
նաև լովի նրան ու մոռանալով Վահանին: Իսկ Վահանը  
զգույով իր ծանր գրությունը, գլուխիր կախ, վերադապավ  
ու նստեց իտուի նստարաններից մեկի ծալքին:

— Եդ վճնց, — հարց ավեցին մի քանի հոգի Վաչիկին:

— Բնենց վոր, յերկաթը պակասել ե:

— Ի՞նչ յերկաթ, կորդին բան ասա:

Վաչիկը պատմեց այն ամենն, ինչ լսել եր հորից վե-  
րանորոգչական արհեստանոցի, ճանապարհների փակ լի-  
նելու, յերկաթ չլինելու, գործիքների մեծ մասը ժամա-  
նակին պատրաստ չլինելու վանդիք, պլանների քանդկե-  
լու մասին:

— Ենպես վոր, ուրեմն, կոլխոզը չի կարող կենին  
պապի կտակը կտարի, — վերջացրեց նա իր խոսքը:

Տիրեց լուսթյուն էսպամ եր յերեխաններից մի քա-  
նիսի վնչոցը:

— Բա վճնց կը լինի, — կարծես ինքն իրեն հարց  
ավեց Տրդատը, թեվի տակից պայմանակը ցած զնելով:

60251-67

Բրիգադի Վաչիկը — 2



— Հարկավոր ե լերկաթ գտնել, վըտ բերեց Վա-  
չիկը:

— Շատ, հարցրեցին այս ու այն կողմից:

— Ինչքան վոր կարանք:

— Դեռ ինչքան ժամանակ կա մինչև ճամփերը բաց-  
վեն: Գնա մինչև մի ամիս:

— Թե ասա արհեստանոցն ես ամբողջ ամիսը կանդ-  
նելու լե Ելի:

— Թե վոր լերկաթ չլինի, կանգնելու լե, ուրիշ հար  
չկա, վճռակոն ասաց Վաչիկը:

— Ի՞նչ անհնք:

— Յերկաթ հավաքենք:

— Բնչի, լերկաթը դաշտում թափած ա, վոր գնանք  
հավաքենք:

— Տղերք, Վաչիկը ճիշտ ե ասում, պետք ե լերկաթ  
հավաքենք, — և ուաջ անցավ Վարդանը:

— Ախր վնրաեղից հավաքենք, — ձայն տվեցին ալս  
ու այն կողմից:

— Կա լերկաթ կա, հանկարծ ձայն տվեց Արամը,  
վոր մինչ ալդ լարված մտածում ել:

— Վնրաեղ, վնրաեղ, դարձան բոլորը նրա կողմը:

— Տներում, վնրաեղ, հանգիստ պատասխանեց նա:

— Հա, աներում, — վըտ բերեց Վաչիկը: — Յես ել հենց  
եղ միտքն եմ արել Ամեն տան ել մի կտոր, լերկու կտոր  
անպետք լերկաթ կնի վեր ընկած:

— Ե, դրանով ինչ դուրս կկա: Մի լերկու կոտրած  
լերկաթի կտոր, — կասկածամտեց Շողիկը:

— Ընկերներ, ամեն տան մեջ ել կոտրած տկան ող,  
անպետք լոմի կտոր, սոնի և եղ տեսակ ուրիշ շառ բան  
կա, թե վոր հայրապէի, ահազին լերկաթ դուրս կկա — բո-  
յատրեց Վաչիկը: — Բա մի հաշիվ արեք ե, լերեք ահազին  
կեզ ե, քիչ հո. չի:

— Ճիշտ ե, ճիշտ ե, կլանի, — համաձախնեցին շատերը:

— Ենքան ընի արհեստանոցը՝ չկտնգնի մինչև ճանա-  
պարհները բացվելը:

— Մինչև քաղաքից լերկաթ բերելը:

— Չեն տա:

— Դրդւստ ա, չեն տա:

— Կտան, ինչնւ չեն տա:

— Մենք կգտնենք:

— Կհասկացնենք:

— Կոլխոզի համար ա, կտան:

— Իրանց համար ա, հո ուրիշի համար չի:

— Իսկ ինչպես հավաքենք:

— Ո՞վ հավաքի:

— Սուս արեք, սուս արեք, ընկերներ, — ծեծեց սե-  
ղանը կորիարը:

— Բրիգադ ընտրենք, — ասաց նա, լերը լոռվթլուն  
տիրեց: — Ենպես, ինչպես աշունը քաղաքից լերկաթ բամ-  
բակ հավաքող բրիգադը:

— Ընտրենք, ընտրենք, — նորից աղմկեցին լերեխտ-  
ները

— Բրիգադ, բրիգադ:

— Ում եք ուզում ընտրենք:

— Վաչիկ:

— Արամ:

— Վարդան:

— Սիրան:

— Տրդատ:

— Սպասեցեք, ընկերներ, — ձան տվեց Արամը, քա-  
նի հոգի:

— Հինգ:

— Վեց:

— Տասը:

— Ցոթը, լոթը հողի, լոթը լավ ե: Մեկն ել նըտն-  
ցից ընտրենք բրիգադի մեծ:

- Յոթ... յոթ...
- Վաչիկը բրիգադի մեծ:
- Վաչիկը, Վաչիկը,
- Վաչիկը բրիգադիր:
- Բրիգադիր, բրիգադիր:

Յերկաթ հտվաքող բրիգադն ընտրվեց:

Յերեխաներն ուրախ-ուրախ գուրս լեկան դաստիարակց և յերեք խմբի բաժանվելով, ճանապարհ ընկան դեպի իրենց գուղերը:

Խմբերից մեկի խտեից մտազբաղ քաղաքամ եր Վահանը և մտքում շատ եր գովում իր ընկերների վորոշումը:

— Ինչքան լավ կլինի, վոր իմ հերն ել կոլխոզ մտնի, — Թառանչեց նա, քայլերն արագացնելով, համնելու ընկերներին:

Ճանապարհին ել յերեխաները շարունակում ելին վորվորված խոսակցել իրենց բրիգադի մասին:

Ամենից քիչ խոսում եր Վաչիկը նա մատզբաղ եր Նա հասկանում եր, վոր իր վրա շատ մեծ պարտականություն ե զբաժան և այժմ աշհեստանոցի աշխատանքի հաջողությունն իրենից ե կտխված, իր աշխատանքի թափից:

## 5

Արհեստանոցը տեղավորված եր կտխերում, մի դատարկ մարտում: Այժմ թե կալերը և թե մարտիները մեծ մասամբ անզործադրելի ելին, վորսվեան կոլխոզականները դեն ելին դրել իրենց կամերն ու ջարջառներն ու ցորենը ծեծում ելին մեքենաներով, ինչ դարձանի համար կոլխոզի գոտի մոտ մի մեծ սորտագ ելին շիներ Մի քանի մարտգ եր մնացել միան, վորոնց տերերը դեռ չհասկանալով կոլխոզի ոգուառը կամ կուլտիւրի ազդեցություն տուկ ընկնելով, շարունակում եցն իրենց մենատեսությունը: Բրիգադը միւսու որն այցելեց արհեստանոց՝ Հուսնոցն

աշխատում եր լրիվ, բայց դարբնոցում համարբու աշխատանք չկար, մանր զործեր ելին կատարում է Բանվորների մեծ մասը պարապ նստած արհեստանոցի վերին մասում միմիանց վրա զցած նորոգության կարիք ունեցող գութանների, ողեր շունեցրդ անիջերի և զանազան այլ դորձիքների վրա, ծխում ելին:

Աշխատում եր միան մեկ քուրա:

Յ ըստ բրիգադը ները մտավ, վարպետը զնդանի վրա մի բանվորի ոգնությամբ ստվի շիկացած սոնի յեր-ծեծում:

Նու մի ակնթարթ բարձրացրեց դուիսր, նախց լեռեխաներին, վորոնք արդին հետաքրքրությամբ մոտեցել ելին զնդանին ու նալում ելին, ինչպես ծանր մուգճերի հարվածներից հասա լերկաթը վափուկ մոմի պես տափակում ե, մի այլ հարվածից կրկին ուղղվում ե, լերկարում:

Վարպետը կրկին ուշադրությունը կենարոնացնելով ծեծվող լերկաթի վրա, անբավական ձախով ասաց:

— Հեռու կացեք, կալծերը ձեզ վրա կմոչեն:

Յերեխաները յետ քաշվեցին ու սպառեցին, հեռվից լարված հետեւելով զնդանի վրա կատարված աշխատանքին:

Յերը վարպետը ստուծ սոնին դրեց քուրան ու բանվորը վալատի ծալից կախված թելր քաշելով, վուքան ուղցրեց ու կրակը բորբոքեց, տղաները կրկին տուշտացան: Վարպետը թեքով մաքրելով ճակատից տուտարեն թափվող քրտինքը, դորձավ յերեխաների կողմը:

— Թամաշի յեք յեկեր Գնացեք ձեր աները, եստեղ թամաշի բան չկա:


Վարպետն ակների կերպով վատ արամադրության մեջ եր:

— Զե, վարպետ, առաջ անցավ Վաչիկը, — մենք ուղում ենք ողներ:

— Մենք բրիգադ ենք կտղմեր:

— Վաչիկը բրիգադիր ա:

Յերեխաները խառնվեցին միմիանց ու բացականչեցին այս ու այն կողմից:



— Սպասեցեք, սպասեցեք, — ձեռքը բարձրացըց վարպետը: — Ի՞նչ բրիգադ, ի՞նչ ոգնել: Ոգնողի կարիք չունենք մենք, հրեն մեր բանվորներն են պարտապ մնացել, ոգնողն ի՞նչ ենք անում:

— Վարպետ, աշխատել չե, մենք ուզում ենք յերկաթ հավաքենք:

Վարպետի գեմքն անմիջապես փոխվեց, պարծառացավ:

Մի կողմ նստած բանվորները վեր թռան տեղերից ու վագեցին նրանց մոտ:

Փուքուր փչող բանվորը մի ըռպե մոռացավ թելը քաշել և վիզը յերկարեց նրանց կողմը:

— Ի՞նչ ասեցիք, — հարցրեց վարպետը ժամանուու: — Յերկաթ:

— Յերկաթ: Մենք իմացանք, վոր կոլխոզի գործ դժվարացել ե, ճամփեքը փակ են, մենք բրիգադ ենք կազմել տներից յերկաթ հավաքենք: — Վաչիկի խոսքերում վատահության շեշտ կար: Նա ավելի վոգեվորվեց, տեսնելով

լիչպես ուրախ դեմք ստացան բոլորը, ինչպես վարպետի լախ դեմքի վրա աչքերի շուրջը ծալքեր գուացան և ուրախ ծիծաղ դուրս թռավ նրա բերանից:

— Կեցցեք, տղերք, բացականչեց մի բանվոր: — Այինչ եմ տեղ, իսկական կոլխոզականներ եք:

— Տղերք ջան, դե ձեզ տեսնեմ, լավ միտք եք արել, ել ամօթով շթողնեք, — տսաց վարպետն, իբ ահազին ձեռքը վաչիկի ուսին դնելով: — Հավաքեցեք, ինչ վոր ձեռքներդ կընկնի, մենակ թե յերկաթ լինի:

— Ընկերներ, — դարձավ վարպետը բանվորներին, — ել քիթներդ մի կտի արեք, հիմի անկտսկած պլանը կկատարենք:

— Կկատարեք, — վատահ տսաց Վաչիկը, — մենք խնաք ենք տալիս:

— Այս, խնաք, ենք տալիս, — հաստատեցին բրիգադի մյուս տնտեսները:

6

Բրիգադն սկսեց իր աշխատանքը:

«Յերկաթի բրիգադ», — այդպես ելին անվանում նրանց դրույում:

Բրիգադն իր աշխատանքն սկսեց հենց այն գլուղից, ուր գանվում եր արհեստանոցը:

Գլուղը բաժանեցին թողերի, իրենք ել խմբերի բաժանվելով, ամեն որ, գլուղից տուն վերտառնալուց հետո, շտապշտապ ճաշում ելին և անմիջապես վազ ելին տալիս իրենց թաղերը, ման ելին գտլիս անից-տուն:

Շտապիսակցություններ յեղան բրիգադի մտսին: Կալին նմանապես դժգոհողներ:


Կուլակները, կուլակների համելիսոնները հայելում ելին նրանց, բակերից դուրս ելին անում, շներին քըս ելին տալիս վրանները:

Բայց մեծամասնությունը զոհ եր: Կոլխոզականներն

ուրախանում ելին, տեսնելով ինչպես իրենց լերեխաները  
դեռ արդպես փոքր հասակից իրենց ճանապարհով են  
գնում, կոլլեկտիվ կրանքն ասրապնդելու լեռանդ են հայտ-



Նագերում: Իսկ նրանք, վորոնք դեռ կոլխող չելին մտել,  
իրենք իրենց միտք ելին անում, վոր կոլխողի գործերը  
լերեք ձախ չեն գնա, վոր կոլխողն ամեն ահսակ դժվա-



րութունների տակից հաջող ու պատվով դուրս կգա, քա-  
նի վոր եսանակ փոքր լերեխաներն ել կոլխողի կողմն են,  
կոլլեկտիվ կրանք են ուզում:


Յերկաթ հավաքող բրիդագի կատարած գործը մեծ  
վոգեվորություն տուաջ բերեց ամբողջ դպրոցում: Հարցը



քննության գրեցին պիոներների ընդհանուր ժողովում:  
Բրիդագը մեծացըն, բաժանեցին լերեք խմբի, աշխատան-  
քը ծավալեցին լերեք գլուղում միաժամանակ:

Վաչիկն հանգստություն չուներ, վազ եր տալիս մեկ  
արև խմբի մոտ, մեկ ան խմբի, կարգադրում եր, ստու-  
գում եր, շուտ - շուտ գնում եր տրհեստանոց:

Յերեք գլուղում ել արդեն ճանաչում ելին բրիդագիր  
Վաչիկին:



Վաչիկի ծնողներն սկզբում վախենում ելին, վոր  
տղջափ աշխատանքից նա կարող է նիվանդանալ, դասե-  
րից կկտրվի, դպրոցից լետ, կնկնի, բայց տեսնով նրա  
որեցոր ավելի ու ավելի վոգեվորվող գեմքը, նրա ու-  
րախությունից փալլող աշքերը, հանգստացան:

իսկ հավաքվող կոտրովածք լեռկաթի կույտը դորր-նոցում շարունակ մեծանում էր:

Դարբնոցը լրիվ ծանրաբեռնված, աշխատում էր:

Վարպետն ու բանվարները զվարժ, առանց հոգնութիւն աշխատում եին և մուրճերի հարվածների հետ ուրախ լերգեր եին լերգում:

7

Կոլխոզականների ընդհանուր ժողով էր:

Կարմիր անկրանում ըոլոր նստարանները բանված եին. շատերը կանգնել եին, նստելու տեղ չլինելու պատճուի:

Արհեստանոցի վարիչ վարպետը զեկուցում էր արհեստանոցի աշխատանքների մասին:

— Հնկերներ, դարբնոցն իր պլանները գերակատարել են: Կոլխոզի բոլոր դորձիքները վերանորոգված են, պատրաստ են ժամանակից առաջ: Մի քանի որից կականք վերանորոգել մենատնտես չքավորների ու միջակների գործիքները, վարպեսզի նրանք նույնպես կատարեն իրենց կոնտրակտացիաները:

Այս հաջողությունն, ընկերներ — ձախը բարձրացրեց վարպետը, — մենք ձեռք ենք բերել շնորհիվ «լեռկաթի բրիգադի», մեր փոքրիկ ընկեր Վաչիկի:

Հազիվ եր խոսքը վերջացրել վարպետը, մոր թնդացին ծափահարությունները Մի կոլխոզական դրկեց Վաչիկին ու կանգնեցրեց սեղմանի առաջ ժողովականների դիմաց վարպեսզի բոլորը լավ տեսնեն նրան:

Իսկ բրիգադի մյուս անդամներին, վարոնք ցրված ելին դաշինում ալս ու այս կողմ, մեկմեկ դուրս կանչեցին ու առաջ տարան:

Նրանք համախմբվեցին Վաչիկի շուրջը:

Դահլիճում ծափահարությունները շարունակում եին, միախառնվելով բացականչություններին.

Ապրի փոքրիկ ըրիգադեր..  
Կեցցն լեռկաթի ըրիգադը..



Ապրեն մեր պիոներները..  
Ուրախությունից և հուզմունքից Վաչիկը շինութվել եր, բաց աշքերը շարունակում ելին վավել վագեվորությունը:



58401

ԳԻՒԾ 20 Կ.



БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ВОСТОКА  
Академии Наук  
СССР

Ա. Տ-Օվանյան  
БРИГАДИР ВАЧИК  
Госиздат ССР Армении  
Эривань—1932